դարձաւ նաեւ նորաւարտ Յովհաննէս Յովհաննիսեանը, որպէս դասատու ռուսաց լեզուի եւ գրականութեան, այլ եւ ընդհանուր գրականութեան։ Աւելի ուշ, երբ ճեմարանի ծրագրի մէջ յունարէնի դասատուութիւնը եւս առնուեցաւ, Յովհաննիսեան ստանձնեց նաեւ այդ առարկայի ուսուցումը։

Յովհաննիսեան պաշտօնավարել է Էջմիածնի ճեմարանում 1888–89 դպրոցական տարուանից սկսած մինչեւ 1909–10, միայն թէ՝ փոքրիկ ընդհատումներով. այն է՝ 1891–92–ից մինչեւ 1893–94 նա եղել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի ուսուցիչ, 1900–01 թուականին էլ՝ նոյն քաղաքի Յովնանեանի օրիորդաց վարժարանի տեսուչ։

1906 թուականից սկսած՝ Յովհաննիսեան կատարում էր միեւնոյն ժամանակ, լինելով հանդերձ ճեմարանի ուսուցիչ, Էջմիածնի Սինոդի ատենադպրի պաշտօնը, ուր նրան հրաւիրել էր իր բարեկամ Նահապետեան եպիսկոպոսը — այդ ժամանակ ազդեցիկ անդամ Սինոդի։ 1910–ից սկսած, երբ Յովհաննիսեան թողեց ճեմարանը, շարունակեց ատենադպրի իր պաշտօնը դարձեալ մի քանի տարի։

1912 թուականին Էջմիածնում եւ այլուր կատարուեցաւ Յովհաննիսեանի գրական գործունէութեան 25–ամեայ յոբելեանը։ Շատ չանցած՝ նա հրաւիրուեցաւ Բաղու, որպէս տեսուչ քաղաքային դպրոցների։ Մի քանի տարի յետոյ, պատերազմէն վերջը, նա նորէն տեղափոխուեցաւ Երեւան ու Էջմիածին, կատարելով զանազան պաշտօններ։ Վերջին տարիները նա անդամ էր նաեւ Երեւանի գիտութեանց եւ արուեստից հիմնարկութեան։ Ինչպէս երկրում մնացած մեր գրագէտներից ոմանք, դրանց թւում նաեւ Յովհաննիսեանը պահանջուած տուրքը տուաւ բոլշեւիզմին։ Իր ողջ էութեամբ այդ պահպանողական հայը եթէ չդրուեցաւ եւ կամ չընդունուեցաւ կուսակցութեան անդամ, բայց կամայ թէ ակամայ եւ ի հարկին անհատօրէն — բայց ոչ երբեք դրականօրէն. նոյնը նաեւ Յովհ. Թումանեանը — զովքը արաւ նոր իշխանութեան եւ իշխանաւորների։ Հայ գրականութեան պատմութիւնը ի հարկէ մոռացութեան պիտի տայ մարդկային նման, միանգամայն՝ հասկանալի եւ բացատրելի, թերութիւններ։ Բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանն է, որ կազմում է մեր գրականութեան անկապտելի սեփականութիւնը։ Այնտեղ նա ունի իր պատուաւոր տեղը։ Արժէ ծանօթանալ Յովհաննիսեանի գրականութեան։

Եւ սակայն, Յովհաննէս Յովհաննիսեանի գործունէութիւնը չի սահմանափակւում գրական ասպարէզով։ Մենք տեսանք արդէն, որ նա իր ամբողջ կեանքը մատաղ սերունդի դաստիարակութեանն է նուիրել, պաշտօնավարելով կովկասահայ ամենանշանաւոր կրթական հիմնարկութիւններում։

Հայ գրական, հասարակական եւ դպրոցական ասպարէզներում գործող բազմաթիւ դէմքեր աշակերտած են Յովհաննիսեանին, իրենց մտաւոր կրթութեան մի որոշ մասը նրան են պարտական։ Հարիւրաւորներ են այդ մտաւորական դէմքերը։ Յովհաննիսեան իր այդ բազմաթիւ աշակերտների մէջ զարթեցրել է սէր դէպի գրականութիւնը — ընդհանուրը, ռուսականը եւ հայ–ազգայինը։ Ճիշդ է, նա երբեք էլ չէ աւանդել հայ լեզու եւ գրականութիւն, բայց քաջածանօթ լինելով նրանց, հոգով նուիրուած է մեր մշակոյթին, նա ներշնչել է իր աշակերտների մէջ սէր դէպի հայրենի հոգեկան գանձերը, յատկացնելով նրանց իրենց պատուաւոր տեղը հանրամարդկային հոգեկան հարստութեանց շարքում։

Յովհաննիսեանի զբաղումը եղած է ուսուցչութիւնը։ Իր ազատ ժամանակն է միայն յատկացրել գրականութեան։ Սակաւ բացառութիւններով՝ այդ է եղել արդէն կեանքը մեր գրական դէմքերի։ Գրականութիւնը դեռ եւս ինքնուրոյն, անկախ ասպարէզ չէ մեզանում, անդամ բնատուր դրողների համար։

2.— Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԿՐԱԾ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յովհաննէս Յովհաննիսեան ոտանաւորներ գրել սկսել է դեռ 15 տարեկան հասակից, երբ Լազարեան ճեմարանի 4–րդ դասատան աշակերտ էր։ Հէնց այդ տարիներում եւ այդ ուղղութեամբ էլ նրա վրայ մեծ ազդեցութիւն է թողել մեր աւագ բանաստեղծներից Սմբատ Շահազիզ, որ եղել է Յովհաննիսեանի հայրենի ուսուցիչը Լազարեան ճեմարանում։